# ԱՄՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ COVID-19-Ի ԴԵՄ ՊԱՅՔԱՐՈՒՄ

Հայաստանում համավարակից առաջ կատարված ԱՄՆ կառավարության ներդրումները բարելավեցին ՀՀ Կառավարության՝ COVID-19- ին արձագանքելու կարողությունը.

ԱՄՆ ՄԶԳ-ի՝ 106 միլիոն ԱՄՆ դոլարի ներդրումը ՀՀ առողջապահություն ոլորտում և համագործակցությունը վերջինիս հետ բարելավել է որակյալ բուժօգնության հասանելիությունը՝ քաղաքացիների համար ապահովելով անվճար առաջնային բուժօգնության և ծննդօգնության ծառայություններ, հզորացնելով Առողջապահության նախարարությունը, բարելավելով բուժծառայություն մատուցողների հմտությունները և վերանորոգելով և կահավորելով Հայաստանի առավել կարիքավոր գյուղական բուժհաստատությունները:

ԱՄՆ Պաշտպանության դեպարտամենտը ամրապնդել է Հայաստանի կարողությունը՝ ուղղված բնակչության կենսանվտանգությանն ու կենսապահովմանը՝ օժանդակություն տրամադրելով Նորքի ինֆեկցիոն հիվանդանոցին և ԱՎԱՆ լաբորատորիային, որը Հայաստանում COVID-19 թեստավորման առաջնային կենտրոնն է,

Ամրապնդվել են Արտակարգ իրավիճակների նախարարության արձագանքման կարողությունները՝հրշեջ և փրկարարական կայանների վերանորոգման և անձնակազմի համար սարքավորումների և մասնագիտական վերապատրաստման միջոցով:

ԱՄՆ ՄԶԳ- ի աջակցությունը բարելավեց ՀՀ կառավարության ռազմավարական հաղորդակցման համակարգերը՝ տեխնիկական օժանդակության և նոր սարքավորումների տրամադրման միջոցով:

Արտակարգ դրության հայտարարումից հետո ԱՄՆ-ը իր օժանդակությունը ուղղեց հայաստանյան գործընկերներին COVID-19-ին արձագանքելու հնարավորության ընձեռնմանը՝ ֆինանսավորումը վերահասցեավորելով և ավելացնելով $6.6 միլիոն ԱՄՆ դոլարով՝ հետևյալ գործողությունների միջոցով:

700,000 ԱՄՆ դոլար ՀՀ կառավարության տրամադրված շտապ բնաիրային օժանդակության տեսքով, ներառյալ.

- Համակարգիչների տրամադրում Արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայությանը,
- Ճգնաժամային հաղորդակցության աջակցություն՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Առողջապահության նախարարության և Էկոնոմիկայի նախարարության ուղերձները բոլոր հայաստանցիների համար հասանելիությունը ապահովելու համար հասնելու համար,
- Անձնակազմի և համակարգիչների թվի ավելացում Հայաստանի միասնական տեղեկատվական կենտրոնի համար,
- Հիվանդանոցային մահճակալներ, ախտահանող հեղուկներ և ռենտգեն սարքավորումներ հիվանդանոցներին և քաղաքապետարաններին,
- Առաջին անհրաժեշտության իրերի և սննդի տրամադրում՝ աջակցելու դրանց բաշխմանը Շիրակի մարզպետարանի կողմից 1000 տարեցների և անապահով ընտանիքների,
- ՀՀ Կառավարության COVID հաղորդագրությունների և «Մի բան անենք» արշավի միջոցով դրամահավաքի ընդլայնում,
- Հեռավար հաղորդակցության սարքավորումների տրամադրում ՀՀ Կառավարության հեռավար աշխատանքի համար,
- 2000 COVID-19 թեստերի, սարքավորումների և թեստերի համար անհրաժեշտ սպառվող պարագաների տրամադրում Հայաստանի միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեին:

**2.7 միլիոն դոլար** լաբորատոր կարողությունների հզորացման, ծանր դեպքերի վարման բարելավման և համայնքների մակարդակի պատրաստվածության պլանավորման, ռիսկերի հաղորդակցության և առողջության և հիգիենայի խթանմանն աջակցելու համար:

**1.2 միլիոն ԱՄՆ դոլար՝** COVID-19- ի տնտեսական հետևանքների վերացման համար ձեռնարկություններին փոքր դրամաշնորհների և համայնքի մակարդակով տնտեսական գործունեությանն աջակցելու համար:

**1.8 միլիոն ԱՄՆ դոլար** համայնքահենք սոցիալական աշխատանքի և տվյալներով պայմանավորված դեպքերի կառավարման համար՝COVID-19- ի հետևանքների պատճառով առավել խոցելի երեխաներին և նրանց ընտանիքներին աջակցելու համար:

**200,000 ԱՄՆ դոլար** քաղաքացիական հասարակությանը և անկախ լրատվամիջոցներին՝COVID-19 արձագանքման, հաշվետվությունների և վերահսկողության համար:

Միացյալ Նահանգների կառավարությունը կշարունակի աջակցել Հայաստանին վերականգնվել COVID-19- ի հետևանքներից ինչպես ազգային, այնպես էլ տեղական մակարդակում՝ ինչպես ընթացիկ, այնպես էլ նոր ծրագրերի միջոցով.

տնտեսական աջակցության տրամադրում, ներառյալ գյուղատնտեսության, ագրոբիզնեսի և զբոսաշրջության ոլորտներում,

Աջակցության տրամադրում ՀՀ կառավարությանը՝ ներառյալ օժանդակության խթանում ռազմավարական հաղորդակցության և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ծառայությունների մատուցման և ենթակառուցվածքների համար, և

աջակցություն Հայաստանի առավել խոցելի բնակչությանը: